

ԵՎԻԹԻ ՏԵՐ ԱՎԵԲՈՒԴՆԵՐԻՆ ԲՈՂՋԱԾՈՂԱՌԵՑ.

ՔՆԱՐ-ՄՈՒԶԱՅԻ


(Փորձեր)



Թ ի Ֆ լ ի ս

Տիպ. Գրադ. Իզդ. Տօվ. | Տաղապահ. Կրաց Հրատ. Ընկ.

1900



ԵՂԻԶԵ ՏԵՐ ԱՂԵՔՈՆԴՐԵԸՆ ԲԱՂԴԱՑՈՒՆ.

ՔՆԱՐ-ՄՈՒԶԱՎԻ

(Փոլակեր)

ՀԵ
1301



ԹԻՖԼԻՍ

Տիպ. Գրվ. Իзд. Տօվ. Ո Տպարան Վլադ Հրատ. Ընկ.

1900

Дозвол. Ценз. г. Тифлисъ, 24 сентября 1899 г.

ՔՆԱՐ-ՄՈՒԶԱՅԻ



Շատ են երգել ու քեշները,
Սիրոյ ուրախ վառ գարուն.
Վեճակել չէ ինձ իմ բաղդը,
Երգել սիրոյ վառ գարուն...

Ե. Բ.

ՆՈՒԵՐ ՕՐ. N-ին.

Ես միշտ կուզէի, որ քո երգերում,
Միշտ երգուեր սիրոյս, տխուր երգերը.
Եւ քո թաւշապատ, կարմիր շուրթերը,
Աղօթեր Վէհին, սիրոյ սաղմոսներ...

Ես միշտ կուզէի, որ քո շրթունքներ,
Արտասանէին, սուրբ սիրոյ խօսքեր.
Եւ քո կեանք եռող, բոցոտուած սիրտը,
Անշէջ վառ պահէր, անարատ սէրը...

ՄԵՂՄ..., ՅԵՑ ՄԵՂՄ ՀՆՉՈՒԵՑԻՆ.

Մատաղ սրտիս դառն վշտերը,
Կրկին անգամ նորոգուեցին.
Եւ այս անկեղծ սիրոյ խօսքեր,
Մեղմ..., շատ մեղմ, հնչուեցին...

«Ոէր շնչեցիր, դու իմ սրտում
Եւ կեանք տուիր ինձ նորից,
Ինչպէս վարդը գարնան ցողում,
Կեանք է առնում արևելքից.

Բոյսի նման անտալատում,
Պիտ թռռմէի լաւիտեան.
Թէ որ շուտով սիրոյ սաղմեր,
Կեանք չ'տալին իմ սրտին...»

Ապրել եմ ուզում.

Գալիս է գարուն, զարդարում դաշտեր,
Ծաղկանց բուրմունքով, երկիրը լցնում.

Դառնում են մեզ մօտ, թռչնոց երամներ,
Եւ ծլվլոցով, բոլներ են հիւսում.

Նոքա երգում են. բայց ի՞նչ են երգում,
Արդեօք, սուգ ու լաց, թէ ուրախութիւն.
Կան, այո՞ նրանցից, ուրախ են երգում,
Կան և նրանցից, սև օրեր երգող...

Ես էլ սրանց հետ, երգում եմ սև օրս,
Որպէսզի մի քիչ, հանգիստ տամ սրտիս.
Թողած հողի տակ, սիրոյ հրեշտակիս,
Այս դառն աշխարհում, ապրել եմ ուզում.

Եւ ես սիրեցի.

Եւ ես սիրեցի, հրավառ աչեր,
Կենսատու լուսով կենարար հոտով.

Եւ ես պաշտեցի, կարմիր շրթունքներ,
Եղեմեան դրախտի, անուշ բուրմունքով.



ԱՐՏՅՈՒՆՔՆԵՐ.

Երբ տեսնում եմ փալլուն արե
Գարնան ուրախ զւարժ օրեր,
Կանաչ դաշտեր բիւր ծաղիկներ,
Շքեղ սիրուն զարդարուած,
Երբ լսում եմ մօտ ձորակի
Պաղ աղբիւրի կարկաչիւն,
Եւ սրանց հետ հովիւների
Սընդի անուշ մեղեղին,
Այդ ամէնից ես հիացած,
Ծառի շւաքում լուռ նստում եմ,
Եւ տոչորուած զգացմունքով,
Ցնորքներ եմ մտածում...

~~~~~

Թէ ինչպէս ես փայփայում եմ  
Իմ սիրելով փաղաքշում.  
Եւ զմայլուած նրան նայում,  
Այդ ցնորքովն լագենում.  
Բայց երբ յանկարծ ուշքի դալով,  
Տեսնում եմ ես միայնակ,  
Նոյն հոգսերով ըեռնաւորուած,  
Որ լինում է աշխարհում,  
Այն ժամանակ անիծում եմ  
Սև և կապոյտ իմ ծնունդ...  
Երազ դարցած իմ յոյսերին,  
Յետեսում են «արտցունքներ...»

«Փ Ե Զ».

—

Այժմ կեանքիդ, ուրախ օրեր,  
Քեզ ժպտում են, անդադար.

Երջանկութեան, ուրախ ժամեր,  
 Միշտ անցնում են, անդադար.  
 Յանկանում եմ, մինչև 'ի մահ,  
 Գարուն ժաղտալ, քեզ ուրախ.  
 Եւ մաղթում եմ, քեզ հրեշտակիս,  
 Սէր յաւիտեան և անխախտ.  
 Ընծալում եմ քեզ իմ կողմից,  
 Իբր լիշտատակ այս տողեր,  
 Որ դու լիշես, մի ժամանակ,  
 Թշւառ դժբաղդ քո Ե—իդ...

---

### ԵՒ ԵՍ, ՀԵԿԱՑՈՒՄ ԻՓ.

Եւ ես, հաւատում էի...  
 Քո տուած երգմանդ, և խոստումներիդ.  
 Եւ ես, հաւատում էի...  
 Քո ինձ նուիրած, ըիւր համբոլներիդ ...

---


Ոտքերդ ընկած, ահա,  
Սէր եմ աղերսում, սիրել խօսոանում,  
Ի՞նչ ես ծիծաղում,—ասա,  
Միթէ չես զգում, որ սիրտս ես մաշում...



### Թղթ, ԿՈՉԵՆ, ԾԱՌԱՅԻՔ ԴՐԻ.



Թող քեզ կոչեն խելագար,  
Թող քեզ կոչեն խեղկատակ,  
Թող քեզ ծաղրէ կոլր անբոխ,  
Թող քեզ անէ ոտնակոխ,  
Դու ծառալիր գաղափարիդ  
Դու մունջ դնա քո ճամբար.  
Վաղ թէ ուշ մի օր արև կենարար,  
Կ'կենդանացնէ և քարէ սրտեր...



Ն Ո Ւ Ե Ր ընկերներիս:

---

Երբ մի անգամ պարտիզում,  
 Ես ման եկայ մալիս ամսում,  
 Այնտեղ տեսայ ես վարդենուն,  
 Բացուած փարթամ կոկոններով.  
 Շատ զննեցի ես ալդ վարդին,  
 Հոտոտեցի և հիացալ,  
 Կարմիր վարդը գեղածիծաղ,  
 Հանդարտ ասաց ալս խօսքեր.  
 «Շատ մի նալիր կարմիր գոյնիս  
 Եւ մի լիանար հոտովս,  
 Որովհետեւ, դոքա երբէք,  
 Ինձ չեն անում երջանիկ...  
 Կ'գայ ձմեռ և իմ օրեր  
 Կ'սեանալ կ'չքանալ,  
 Եւ իմ գլխին ըուք ըորաններ  
 Քանի անգամ կ'բռնանալ...»

Ահա այսպէս ես անբաղխտ եմ.

Բայց միք կարծիլ, ով դուք մարդիք  
Որ կարմրութեամբ անուշ հոտով  
Երջանկութիւն կ'լինի...

\*      \*

Ծառոց հովերում շրջելով մենակ,  
Ա՛խ քեզ եմ լիշում երկնալին հրեշտակ,  
Կարօտում եմ քեզ, ես ալդ վայրկեանում  
Ինչպէս բլբուլը չորացած վարդին...

Կենդանի մեռած եմ ախ քեզի համար,  
Ճնշւում է հոգիս քեզ չ'տեսնելով,  
Էակ արժանի իմ հոգոյս հատոր,  
Ախ ըովէ անգամ, ես չունիմ դադար...

Ազատիր ինդրեմ, ինձ այս ցաւերից,  
Սիրոյ կապանքները չ'ճնշեն սիրտս.

Կամ թէ չէ գոնէ տուր ինձ քո ձեռովդ  
Թոլնի բաժակը... ինձ, այդ է մնացել...

ԿՈՐՉՈՒՄ ԵՆ...

Քնար առած իմ ձեռը,  
Ես երգում եմ անդատար,  
Եւ իմ տխուր բիւր երգերը,  
Անչետ կորչում են դէպ հեռուն...



ՀՅԵՐՍ ՄԻԾՑ ԻՆՉ ԷՐ ԸՍՈՒՄ ՄԱՆՈՒԿ ԺԵՐԵՆԵԿՈ.

Երբ որ մանկական փոքր հասակում  
Տեսնում էի ես շատերին տխուր,  
Զարմանում էի թէ ինչու նրանք էլ,  
Ինձպէս չեն ուրախ և միշտ խնդադէմ:

Դատ անդամ խաղից ես մեր տուն գալով:  
Պատճում էի հօրս իմ տեսած բաներ.

Թէ ինչպէս մէկին ուրախ եմ տեսնում,  
Բայց մի քանիսին տխուր ու տըտում:

Հայրս միշտ ահա այսքանն էր ասում.  
«Միթէ կարծում ես զաւակ աննման,  
Թէ բոլորն էլ քեզ պէս խափուսիկ խաղով,  
Պիտի լիանան, հրճուին, գւարճանան:

Նոցա մեծ մասը, իրենց սրտերում,  
Ունեն շատ վշտեր, որոնք չեն թողնում,  
Քեզպէս միշտ ուրախ, խաղան թռչկոտան,  
Եւ վազէն այնտեղ, ուր որ կամենան:

Երբ կ'մեծանաս և հասակ կառնես  
Դու էլ նրանց պէս կունենաս վշտեր...  
Կդայ ժամանակ դու էլ միշտ տխուր  
Անթիւ հռքսէրով բեռնուած կ'լինիս...

Բայց այժմ քանի դեռ դու մանուկ ես  
Գնա՛, և խաղա, ընկերներիդ հետ

Կ'զայ այն օրը և դու կիմանաս  
ինչէ վիշտու ցաւ հոքսեր և տանջանք...»


Մոռանում էի խակոլն ամեն ինչ,  
Եւ կրկին վազում դէսլի ընկերներ.  
Ի բոլոր սրտէ ուրախ և զվարթ,  
Նորից սկսում առօրեալ խաղեր...

Իսկ այժմ ահա, չորս կողմս մռայլ,  
Էլ չէ փլփլում, մայիսուան արև...  
Վշտերս շատ է ինձ միխիթարել,  
Զեն կարող նոյն իսկ, թեաւորք անթե:

Ախ՝, քանի անգամ, ձեզ ոսկի ժամեր  
Միշտ երանում եմ և պիտ երանեմ,  
Քանի կրկնակի բարցում են վշտեր,  
Եւ միշտ նարոգում իմ անբոլժ վերքեր...

Ափսոս քեզ քաղցրիկ, մանկութեան օրեր  
Գուք շատ ունէիք, բերկըութեան ժամեր.

Երանի նորից դուք յետ դառնալիք  
Եւ ինձ թշւառիս, նոր կեանք շնչէիք...



ՆՈՅՆՆ է ԲՈԼՈՐԸ. ՄԻԱՅՆ,  
ՄԵՆՔ ՆՈՅՆԸ ՉԵՆՔ.

## I

Յիշում ես արդեօք, այս նեղ ծառուղին,  
Վկալէ նա մեր, անցրած ժամերին.  
Յիշում ես ասա, թէ ինչպէս գեղ էր,  
Եւ թէ լուսինը, ինչպէս փալլում էր.  
Լուսինը պայծառ, փալլում վլվլում,  
Երկիրն էլ լոգնած, քնած խըռըմփում.  
Մենք էինք միալն, զգացուած խօսում,  
Մեր սիրոյ երդում, կրկնում ու կրկնում...  
Յիշումես նաև, ինչպէս ծառերը,  
Միմեանց մէջ հանդարդ քչփչում էին.

Եւ իրանց մեղմիկ հանդարտիկ երգով,  
 Քաղցը շըշիւնով, հովհարում էին...  
 Թռուցիկ հանդարդ, զովարար հովը,  
 Սուլում էր հանդիստ, ծածանում արտը.  
 Նա քո շըթունքից, կամաց քաղում էր,  
 Սիրոյ, հրճւանքի, կիզիչ համբորներ...  
 Այստեղ գետնի տակ՝, փոքրիկ ծղրիդը,  
 Երկար ցըտցըտում, իւր երգնէր երգում.  
 Ալնտեղ գիշերուալ, բուն ու բուէճը,  
 Ահա, այս օրուալ, սուգն էին երգում...  
 Այստեղ այս մօտիկ, փոքրիկ առուակը,  
 Հանդիստ հոսում էր, խաղում եղերքով.  
 Նա մեզ ասում էր, որ մի օր ինքը,  
 Պիտի ողողուի, մեր արցունքներով...  
 Յիշում ես արդեօք, որ մի աստղ ընկաւ,  
 Մենք յանկարծ միմեանց, երես նայեցինք.  
 Կարծես այդ աստղը, մեզ լիշեցրաւ,  
 Փշոտ աշխարհի, սին', ունայն, մեր կեանք.

Ահա այս տեսակ, շատ երեկոներ,  
Մենք անցրել ենք, ուրախ երջանիկ.  
Մը էինք շնչում, և սիրոյ սաղմեր,  
Բոյն էին դնում, ձգում արմատներ...

## II

**Տ** Այժմ անփոփոխ, նոյնն է ծառուղին,  
Տ էրկնի վրայ, նոյն փալլուն լուսին.  
Բայց նա մեզ համար, այնպէս չէ փալլում,  
Առաջուայ նման մեզ զմայլեցնում...  
Ծառերն էլ նոյնն են, բայց նրանց տեսքը,  
Մեզ չէ գրաւում, այնպէս էլ գեղ չէ.  
Մեր այն հրավառ սուրբ սիրոյ խօսքը,  
Սառել ու ցնդուել, անհետ կորել է...  
Փչում է նոյնպէս, նոյն այն մեղմ հովը,  
Կամացուկ սուլում, առաջուայ երգը.  
Բայց քո շրթունքից, սիրոյ համբոլըներ,  
Էլ չէ փախցնում, ողբայ ալլուած սիրտըս..  
Օյստեղ գետնի առակ, ուրախ ծղրիդը,

ՁՈՒՆՑԱՅԻՆ Կ. ԱՐԱՆ

Չէ զվարճացնում, իւր ցըտցըտոցով.  
Իսկ բուն քուէճը, իրենց գուժկանով,  
Չեն սարսեցնում, նոքա իմ սիրտը...  
Երկինքը պարզ է, աստղերը փալլում,  
Աստղերը էլի, լանկարծ ընկնում են  
Մենք անցեալի ալես, միմեանց չենք  
նայում,  
Ընկած աստղովն՝ էլ, չենք տարակուսում,  
Առուակը խաղում, լուսնի շիթերով,  
Հանդարտ հոսում է, էլի նոյն շաւզով.  
Անցածը կրկին մեզ լիշեցնելով,  
Տանում է իւր հետ, աղի արտցունքներ...  
Նոյնն եմ և ահա, առաջըդ կանգնած,  
Դու էլ խօ նոյնն ես, առաջս կանգնած.  
Որքան էլ անթիւ փալլին լուսնեակներ,  
Չեն կարող դարձնել, նօրից այն օրեր...  
Ամէն ինչ նոյնն է, բայց մենք, նոյնը չենք,  
Հէնց այդ է պատճառը, տարակոյս չկայ,

Որ մեղ բնութեան, հրաշագեղ տարելք,  
Չեն զմալլեցնում, կեանքի կալծ չ'կալ...

ՆԱ. ՄԻ ՈՒՐԻՇ, ՀՈԳՍ ԵԼ ԶԳԱՅ.

Մանկիկն անմեղ, դառն լալիս է,  
Նա չ'գիտէ, ուրիշ հոգսեր.  
Լացի պատճառը, միայն կաթն է,  
Եւ մօր քաղցրիկ չաղ ստինքներ:  
Ո.նցաւ մի վայրկեան, էլի սկսեց,  
Եւր աղիողորմ, դառը լաց ու կոծ.  
Արդեօք նա ինչեց, էլի սկսեց.  
Նա՝, մի ուրիշ հոքս էլ զգաց...



Երբ մի անգամ, սիրոյ չաստուածուհին  
ինձ երևաց,  
Եւ սիրալիք, ուրախ յոյսերով ինձ  
գրաւեց,

Այն օրուանից, ես երդուեցի լինել նրան  
երկրպագուն,  
Չինակել, կեանքս անգամ, որ դեռ նոր է,  
և տոկուն...

---

Անցան օրեր, և ես մտալ, սիրոյ վշոտ  
ասպարեզ.

Ճաշակեցի սիրոյ քաղցը, բայց թունաւոր  
համբոլըներ.

Բայց ալդ ուշ էր... սիրոյ կրակն ինձ  
ալբում էր տոչորում,  
Եւ անողոք իմ քաղցը, դէպ անգունդն էր  
ինձ տանում...

---

Ես դեռ էլի, վերջին ոլժով, դէպի  
լառաջ եմ, միշտ դիմում,  
Կեանքի լուսով, վերջին կալծը դեռ  
ալբում է իմ սրտում.  
Եւ ալդ մի սին, Շէգ խափուսիկ, կեանքի  
կալծից, խափուելով,  
Մինչև օրս, դեռ կռւում եմ, և պիտ  
կռուեմ չընկճուելով...

---

Ել Զի ծԱթկիլ ՔՈ ՍԵՐԲ...

Եկաւ գարուն. կարմիր վարդը,  
Պիտ բողբոջ է կանաչ է.  
Ամիս չանցած նոյն այդ վարդը,  
Կոկոններով կզարդարուէ:

Կանցնի օրեր. և կոկոնը,  
Պիտի ծաղկէ գեղադէմ.  
Եւ աննման իր բուրմունքը  
Կ'տարածէ ամէն կողմ:

Օրեր կանցնեն. կ'թափւին տերեք,  
Պիտի մնալ մերկ ճիւղեր...  
Չար մարդկերանց անհաշտ ձեռօք,  
Վաղուց արդէն չ'կան վարդեր...

Օրեր կանցնեն. կ'գալ ձմեռ,  
Պիտի փչուին ցուրտ բուքեր.  
Եւ մերձ 'ի մահ կարմիր վարդը,  
Պիտ մրմնջալ աղօթքներ...

Կանցնի ձմեռ. միւս գարնանը,  
Կ'կենդանալ մեր վարդը.  
Եւ համարեալ, նոյն ալդ կարգով,  
Կ'կրկնուի վարդի կեանքը.

---

Բալց իմ սրտում նորից երբէք,  
Ել չի ծաղկիլ քո սէրը...  
Նա նման չէ վարդին երբէք,  
Նա, նման է, ապագուն...

---

Եւ մեզ նորից, չեն կրկնուիլ,  
Մեր անցրած, սիրոյ օրեր...  
Նոքա երբէք, միւս գարնանը,  
Չեն կրկնուիլ, յաւիտեան...

---

## ԻՆՉ ՄՆՈՒՄ Է ԼԱԼ ԵՒ ՍԳԱԼ...

---

Ինձ մնում է լալ, և սդալ,  
Իմ նոր ծաղկած, կեանքի օրեր,

Ինձ մնում է, մի ելք գտնել,  
Որ չտանջեն, իմ ցաւեր...

Մանուկ էի, աչքս բացի,  
Լոյս աշխարհը դուք եկաւ.  
Քիչ ժամանակ որ անցաւ,  
Քաղցի կարօտ զգացի:

Կարդում էի, վարժարանում  
Դասս պատրաստում գիշեր ցերէկ.  
Դաս չգիտէի, մի անգամ,  
Ասին ծով ես, ու անպէտք:

Մեր գիւղումը մի անգամ,  
Տեսայ մեղրի փեթակներ.  
Սիրտս ուզեց, ինչ թաքցնեմ,  
Հանել մեղրի հացիկներ:

Զեռս տարի, բայց Աստուած իմ  
Քանի քտնի, բիւր մեղուներ,  
Տղտղալով, խալթեցին իմ  
Գլուխ երես աչքեր ու ձեռներ:

Ծառի վրայ, երգեց սոխակ,  
ինձ դրաւեց իւր երգով,  
Ծառ բարձրացի, բոքիկ ոտով,  
Եւ կամէի, բռնել սոխակ:

—  
Ճիւղը կոտրուեց, և ես ընկայ,  
Քիթ ու պոռւնգս, ջարդեցի.  
Տարին մեր տուն, ես սլառկեցի,  
Եւ մի շաբաթ տանջուեցի:

—  
Զնաշխարիկ, կոյս սիրեցի,  
Նա ինձ սիրեց, փայփայեց.  
Բայց երբ նրան ձեռք մեկնեցի  
Նա ինձ թողեց, ուրիշ սիրեց...

—  
Ինձ մնում է լալ և սգալ,  
Իմ նոր ծաղկած սիրոյ ժամեր.  
Քնար արնել և միշտ երգել,  
Այս աշխարհի ունայնութիւն...



ԶԵՄ ՆԱԽԱՆՉԻԼ ՈՉ ՌԵՒՆ.

Լերկ անապատ, ժալըի ծալըին,  
Թէթև քամուց տատանւում էր,  
Վալըի մեխակը լալագին...

Ամբողջ ամառ չէր զովացել,  
Եւ արեւը անխիղճութեամբ,  
Արձատներն է միշտ ալըել...

Նա տեսնում էր իւր ազգակցին,  
Փառքով պատւով միշտ ջրում է,  
Այդեպանը տօթ օրերին:

Եւ նախաձի անհաշտ թունը,  
Քնքոլշ սիրտը մորմոքեց.  
Նա, իր ծնունդն անիծեց:

Ինչ էր մեղքս, ասէք խնդրեմ,  
Որ ես բուսալ, ժայռի վրալ,  
Ինչ մեղք ունեմ որ վալըի եմ...

Ալսալէս ահա գանգատւում էր  
Նա իւր բաղդից տրտնջում,  
Մէկ էլ ահա տես ինչ տեսաւ.

Տեսաւ յանկարծ, որ մի մանուկ,  
Ուրախ երգով մտաւ պարտէզ.  
Եւ ուղղակի գէպի մեխակ.

Կտրեց նրան ձեռին վաղեց,  
Տան սիւնի տակ խաղ սկսեց,  
Մոռանալով, թողեց գնաց.

Չանցաւ մի քիչ, հէնց ժամանակ.  
Ահա մի էշ մտաւ բակը,  
Եկաւ կանգնեց սիւնի մօտը,

Քիչ հոտոտեց փռշտաց,  
Եւ անխնայ սմբակներով,  
Խեղճ մեխակին տրորեց...

Փառք քեզ Աստուած, կոչեց վայրին,  
Էլ չեմ ուղում ամենելին,  
Լինել մեխակ տնալին.

Լաւ է ալսպէս, հըկիզ լինել,  
Քան էշերու սմակներով  
Զըկուել այս լոյս աշխարհէց...

---

ՆԹՐԻՑ ԿՐԿՆԵՑԻ ԵՍ ՄԵՐ ՀԻՆ ԵՐԴԱՌԻՄ...

Մինչ քեզ սիրելը, ես ազադ էի,  
Իմ ազադ կամքի, լիազօր տէրը.  
Բայց երբ ինձ ազգեց, քո սիրոյ թունը,  
Իմ ազադ կամքից, ես շուտ զրկուեցի:

---

Ես եղայ անշունչ, ինչպէս մի սև քար,  
Ես եղայ գործիք, բռնակալ կամքիդ.  
Ես ապրում էի, ոչ թէ ինձ համար,  
Այլ մի զոհ էի, կամքիդ, հաճոյքիդ...

---

Երբ խնդում էիր ալրող աչքերով,  
Ես էլ քեզի հետ, պիտի խնդայի,

Երբ լալիս էիր, աղի արցունքով  
Ես էլ քեզի հետ պիտ արտասուէի...

Եւ ահա այսպէս, պիտ փոփոխուէի  
Քո հզոր կամքի, հրամաններից,  
Ինչպէս ամպիկը, երկնակամարի,  
Պիտի փոփոխուէր սաստիկ հողմերից.

Ինչ է պատճառը, քո այդ վէհութեան.  
Եւ ինչ է պատճառ, իմ ստրկութեան.  
Ո՞վ է վերջապէս, ինքն իշխան տերը,  
Քո քնքոյշ սրտին և զօրեղ կամքին.

«Դու ես դու այո, անգութ արարած,  
Որ չ'կշացար տիրելով կամքիս.  
Դու ես որ սրտիկս խլեցիր ինձնից,  
Այժմ էլ հեղնում, ու ինձ ծաղրում ես:

Դու այն ես պատմում ինչ պիտ պատմէի,  
Դու այն ես զգում ինչ ես եմ զգում.

Ես խենդացած եմ ինչու ես ծաղրում,  
Միայն քո սէրն է կետնք տալիս ինձի:

Բաւէ վերջապէս, հէրիք մորմոքես,  
Քո սորկուհոյ, խոցոտուած սիրաը.  
Հերիք է խնդրեմ, ինձ մի լիշեցնիր,  
Վշտերիս վրտի վիշտ շատացնիր:

Ես գիտեմ սիրել, սիրել յաւիտեան,  
Ես գիտեմ տանջուել, սիրուց հառաչել,  
Բայց թէ քո առաջ ծածկել ամենալն,  
Ալդ է պահանջում սիրոլս գաղափար»:

Երբ վերև լիշտ, ծանր վշտերս,  
Տեսալ կրկնակի, սիրելոյս սրտում,  
Կրկին կետնք առալ, և խնդուն երես,  
Նորից կ'ըկնեցի, մեր դրած, երդում:



## ԱՆԵՇՔ ԲԻՒՐ ԱՆԵՇՔ.

Ուհա քո զոհը, զոհ հաճոյքներիդ,  
 Զոհ քո մանկական, ուրախ խաղերիդ,  
 Նա ալժմ զուրկ է, իրաւունքներից,  
 Նա ալժմ զուրկ է իւր ազատ կամքից:

Տապալալ է նա, լաղթութիւնը քոնն է,  
 Գլորիր նրան, որտեղ քո կամքն է.  
 Զգիր կամ եղեմ, կամ նոյն իսկ դժողք,  
 Ալդ էլ դու դիտես, քոնն է իրաւունք:

Նրան խաբեցիր, բայց նա ալդ չզգաց,  
 Դու նրան ծաղրեցիր, բայց նա հաւատաց.  
 Նա քեզ հաւատաց, սիրեց փալփալեց,  
 Եւ քեզ իւր միակ դիցուհին դարձրեց:

Խորտակուեց կեանքը, և իւր ապագան,  
 Խորտակուեց նոյնպէս, նոր ծաղկած սէրը.  
 Այսուհետ նրան ոչ մէկը երբէք,  
 Զի կարող շոյել սփոփել սիրտը:

Նալիք, ծիծաղիք, անգութ մեղսաւոր,  
 Նոլիք և հրճւիք, քո զոհիդ վրան.  
 Արածդ անգուսպ գործէ մեղսաւոր,  
 Խիղճդ կ'տանջէ Կալէնի նման...

---

Նոյն իսկ և երկինք, տիեզերք, երկիր,  
 Կ'թափին գլխիդ, դժոխքի անէծքներ.  
 Եւ հրեշտաւոր, որդեր և դեեր,  
 Կ'կըծեն սիրտտ, երկար տարիներ...

---

Բայց դու դեռ այժմ, ուրախ ժպտումես,  
 Քո առած խաղից, դեռ հիանում ես.  
 Վայ քեզ այն օրը, երբ խղճիդ թոյնը,  
 Ոիտ քեզ հալածէ, տանջէ, չարչարէ:

---

Անիծում եմ քեզ, անէծք բիւր անէծք,  
 Թող թափէ գլխիդ, կալծակներ երկինք.  
 Հիւր, բոց, դժոխ, տանջանք անբաժան  
 Ահա քեզ բաժին, միշտ և յաւիտեան...

---

**ԷԼ. ԶԵՄ ԵՐԳԻԿ ԵՍ ՏԽՈՒԲ.**

Տխուր երգերս վերջացրի,  
 Ել չեմ ուզում ես երգել.  
 Դքեղ տեսքը մեր աշխարհի,  
 Ել չի կարող ինձ խաբել:

Բայց ես նորից, քնար կառնեմ,  
 Միշտ այս կ'երգեմ ամէն ժամ,  
 «Աէր ըարութիւն եղբայրութիւն  
 Այս է կենաց վայելչութիւն»...

**ՊԵՐՉ:**



ԳԱԱ Եիմնարար Գիտ. Գրադ.



FL0415119

(204)

ՀԵՂ  
1301

Պատրաստ են ապագրութեան համար նոյն հեղինակի  
հետեւեալ աշխատութիւնները

ա) „ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԵՐ“ գինը 40 կ.

բ) „ՄԻ ԲՈՒԹՆ ՀՈԴ“

բոմանս երազական ձայնանիշներով երգի եւ դաշ-  
նամուրի համար. երաժշտ. և. Բաղդասարեանցի:  
գինը 40 կ.

ճացուած է թէ առաջինի և թէ երկրորդի  
բամանորդականթիւնը:

